

Ուսանողի ձեռնարկ

2

Թռուցիկ հայացք Աստվածաշնչին Ներկայացնել Աստծո խոսքը



Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար

ԹՈՒՆԳԻԿ ԻՅԱԿՍՔ ԱՍՏՎԱԾԱՉՆՅԻՆ

Ներկայացնել Աստծո Խոսքը

Չեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսանողի ձեռնարկ

5-րդ խմբագրում



Թռուցիկ հայացք Աստվածաշնչին
Ուսանողի ձեռնարկ
5-րդ խմբագրում
Յեղիմակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, A Quick Look at the Bible, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Մտուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել:

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org



Բովանդակություն

Ներածություն	4
Գլուխ 1. Ընդհանուր տեղեկություններ Աստվածաշնչի վերաբերյալ	5
Ա. Հիմնական փաստեր Աստվածաշնչի վերաբերյալ:	5
Բ. Աստվածաշնչի մեկությունը:	6
Գ. Տեսնելով ամբողջ պատկերը (շարունակական հայտնություն):	6
Դ. Ինչքանո՞վ է Քրիստոսը համապատասխանում ամբողջ Աստվածաշնչին: 7	
Ե. Ինչպե՞ս են հաշվվում տարիները:	7
Գլուխ 2. Ինչպե՞ս է գրվել Աստվածաշունչը.....	9
Ա. Ներշնչում. ի՞նչ է դա նշանակում:	9
Բ. Ինչպե՞ս է Աստված ներշնչել մարդկանց՝ գրել Աստվածաշունչը:	10
Գ. Ինչպե՞ս է Աստվածաշունչը փոխանցվել և հասել մեզ:	11
Գլուխ 3. Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ Աստվածաշունչն անսխալ (ճշմարիտ) է..	12
Գլուխ 4. Թռուցիկ հայացք Հին Կտակարանին	17
Գլուխ 5. Թռուցիկ հայացք Նոր Կտակարանին	19

Ներածություն

Այսօր որոշ մարդիկ հարցնում են. «Ինչո՞ւ ես պետք է Աստվածաշունչ կարդամ: Այն հնացած է: Աստվածաշունչը գրվել է 2000 տարի առաջ: Ինչպե՞ս կարող է Աստվածաշունչն ինձ օգնել այսօրվա իմ խնդիրների հարցում»:

Կարո՞ղ ենք մենք պատասխաններ գտնել այս հարցերին:

Աստվածաշունչն ունի պատասխաններ այն հարցերին, որոնք մարդիկ այսօր տալիս են կյանքի իմաստի և նպատակի վերաբերյալ: Աստվածաշունչը մեզ ասում է, թե ով ենք մենք, որն է մեր նպատակը, մեր խնդիրների աղբյուրը և այդ խնդիրների լուծումը: Միայն Աստվածաշունչն է պարունակում կատարյալ կյանք ապրելու կերպը:

Այս դասընթացին մենք պատրաստվում ենք թռուցիկ հայացք գցել ողջ Աստվածաշնչին: Ինչի՞ մասին է այն: Ո՞վ է այն գրել: Ինչպե՞ս է այն փոխանցվել և հասել մեզ:

Ուսուցման ուղեցույցի նախագծերն այնպես են ծրագրավորված, որ օգնեն քեզ՝ մուտք գործել Հին և Նոր Կտակարաններ, որպեսզի ինքդ տեսնես, թե ինչի մասին են այդ գրքերը:

Գլուխ 1

Ընդհանուր տեղեկություններ Աստվածաշնչի մասին

Ա. Հիմնական փաստեր Աստվածաշնչի վերաբերյալ:

1. Քանի՞ գիրք կա Աստվածաշնչում:

39 գիրք՝ Հին Կտակարանում

27 գիրք՝ Նոր Կտակարանում

66 գիրք՝ ամբողջ Աստվածաշնչում

2. Քանի՞ մարդ է գրել Աստվածաշնչի 66 գրքերը:

Մոտավորապես 40 մարդ է գրել Աստվածաշնչի գրքերը: Նրանք տարբեր ծագում են ունեցել, մինչև գրելը՝ տարբեր զբաղմունք և մասնագիտություն: Այդ գրողները եղել են գյուղատնտեսներ, թագավորներ, ձկնորսներ, առաքյալներ, բժիշկներ, քարոզիչներ, հովիվներ և պետական պաշտոնյաներ:

3. Ինչքա՞ն ժամանակում է գրվել Աստվածաշունչը:

Աստվածաշունչը գրվել է 1500 տարիների ընթացքում: Առաջին գիրքը, որ գրվել է, Հոբի գիրքն է: Չկա հստակ տարեթիվ, թե երբ է այն գրվել, սակայն, հավանաբար, գրվել է ՔԱ շուրջ 1500 թվականին: Վերջին գիրքը, որ գրվել է, հավանաբար Հայտնության գիրքն է: Այն գրվել է ՔՀ շուրջ 100 թվականին: Նոր Կտակարանի բոլոր գրքերը գրվել են Հիսուսի մահից և հարությունից հետո՝ մոտավորապես 75 տարիների ժամանակահատվածում:

4. Ո՞ր լեզուներով են գրվել Աստվածաշնչի բնօրինակ գրքերը:

Հին Կտակարանը գրվել է եբրայերեն: Հին Կտակարանի որոշ հատվածներ գրվել են արամերեն:

Նոր Կտակարանը գրվել է հունարեն:

Հին Կտակարանը գրվել է եբրայերեն, քանի որ այդ գրքերը գրելու ժամանակ Իսրայելի ժողովրդի գործածական լեզուն եբրայերենն էր:

Նոր Կտակարանի գրքերը գրելու ժամանակ, եբրայերենն այլևս ժողովրդի խոսակցական լեզուն չէր հանդիսանում: Հունարենն էր դարձել ընդհանուր ընդունված լեզու: Ահա թե ինչու են Նոր Կտակարանի գրքերը գրվել հունարեն:

Բ. Աստվածաշնչի մեկությունը:

Աստվածաշնչի հիանալի կողմերից մեկն այն է, թե ինչպես են այդ բոլոր 66 գրքերը համընկնում, «ընկերություն անում» իրար հետ: Աստվածաշնչի մեկությունը բացատրելու լավագույն ձևը դրա հեղինակին, այսինքն՝ Աստծուն նայելն է: Նա է առաջնորդել այդ տարբեր մարդկանց՝ գրելու Աստվածաշունչը:

66 գրքերը միասին կազմում են Աստծո պատգամը մեզ համար: Աստվածաշնչում մենք կարող ենք տեղեկություն ունենալ, որը մեզ ասում է, թե ինչպես դառնալ քրիստոնյա և ապրել հաջողակ քրիստոնեական կյանքով:

Գ. Տեսնելով ամբողջ պատկերը (շարունակական հայտնություն):

Եթե ուզում ես ճիշտ պատկերացում ունենալ, թե ինչ է Աստվածաշունչն ուսուցանում, պետք է տեսնես ամբողջ պատկերը: Հեշտ է Աստվածաշնչի որևէ հատվածից առանձնացնել մի համար և ցույց տալ, որ այն հաստատում է գրեթե ցանկացած ուսմունք:

Օրինակ, Սաղմոս 14:1-ն ասում է. «...Աստված չկա»: Սակայն Աստվածաշնչում կան շատ այլ համարներ (սկսած Ծննդոցից), որոնք մատնանշում են, որ Աստված կա:

Սաղմոս 14:1-ը չի հակասում մյուս համարներին, որոնք ասում են, որ Աստված կա: Մենք ամբողջ համարը չներկայացրեցինք: Երբ մենք կարդում ենք ամբողջ համարը, լրիվ ուրիշ իմաստ ենք տեսնում: Սաղմոս 14:1-ն ասում է. «Անմիտն իր սրտում ասաց, թե Աստված չկա»:

Մենք, նախքան վերջնական եզրակացություններ անելը, պետք է զգույշ լինենք, որպեսզի հայտնաբերենք, թե ինչ է ասում ողջ Աստվածաշունչը որևէ թեմայի

վերաբերյալ: Կարևոր է տեսնել ամեն մի գրքի, ամեն մի գլխի և ամեն մի համարի կապը ողջ Աստվածաշնչի հետ:

Աստվածաշունչը գրվել է 1500 տարվա ընթացքում: Տարիների ընթացքում Աստված ավելի շատ հայտնեց Իր մասին և այն, թե ինչպես է Նա ուզում, որ մենք ապրենք: Յուրաքանչյուր հաջորդ գիրք մեզ շարունակաբար ավելի շատ բան է պատմում Աստծո մասին:

Այս նույն պատկերը կարող ենք տեսնել Աստվածաշնչում քննարկված գրեթե բոլոր մեծ թեմաների վերաբերմամբ: Ժամանակի ընթացքում ավելի շատ տեղեկություն հայտնելու այս ընթացքը կոչվում է «շարունակական հայտնություն»:

Դ. Ինչքանո՞վ է Քրիստոսը համապատասխանում ամբողջ Աստվածաշնչին:

Հիսուս Քրիստոսն Աստվածաշնչի գլխավոր անձնավորությունն է: Ամբողջ Աստվածաշունչը կենտրոնացած է Հիսուսի կյանքի վրա: Հին Կտակարանն ակնկալիքով սպասում է Հիսուսի գալստյանը: Նա է, ով պետք է գար և մեղքից ազատագրում (փրկություն) բերեր:

Նոր Կտակարանի բոլոր գրքերը գրվել են Հիսուսի՝ երկինք վերադառնալուց հետո: Նոր Կտակարանը պատմում է այն ժամանակի մասին, որ Հիսուսն անցկացրեց այստեղ՝ երկրի վրա: Այն նաև մեզ պատմում է, թե ինչպես պատրաստվենք Քրիստոսի երկրորդ գալստյանը:

Աստվածաշնչում նկարագրված ամենակարևոր դեպքը Հիսուսի հարությունն է: Նա եկավ աշխարհ, մեծացավ և ապրեց մեր մեջ: Նա սովորեցրեց և անձնական օրինակով ցույց տվեց, թե ինչպես պետք է քրիստոնեական կյանք ապրել: Հետո Նա մահացավ, որպեսզի վճարի մեր մեղքերի տուգանքը: Բայց ամենակարևորն այն է, որ Նա հարություն առավ մեռելներից: Մենք հնարավորություն ունենք ծառայելու կենդանի Աստծուն: Նա մեռած չէ:

Ե. Ինչպե՞ս են հաշվվում տարիները:

Այն ժամանակներում, երբ Աստվածաշունչն էր գրվում, մարդիկ այնպես չէին հաշվում տարիները, ինչպես մենք ենք հիմա հաշվում: Շատ երկրներ իրենց տարիները հաշվում էին՝ սկսելով նոր թագավորի իշխանության գալուց: Մեկ այլ մեթոդ էլ կար. հաշվել տարիները՝ սկսած շատ կարևոր մի իրադարձությունից:

Մենք այս օրինակն ունենք Հին Կտակարանում, երբ Սողոմոնն էր թագավոր: Գ Թագավորաց 6:1. «Եվ եղավ, Իսրայելի որդիների՝ Եգիպտոսի երկրից դուրս գալուց չորս հարյուր ութսուներորդ տարում, և Սողոմոնի՝ Իսրայելի վրա թագավորելու չորրորդ տարվա Զիվ՝ այսինքն՝ երկրորդ ամսում, նա սկսեց Տիրոջ տան կառուցումը»: Այս համարը ցույց է տալիս, որ Իսրայելում այդ ժամանակ

երկու մեթոդն էլ օգտագործում էին տարիները հաշվելու համար: Ամեն մի երկիր տարիները հաշվելու իր սեփական մեթոդն ուներ:

Ոչ ավելի շուտ, քան Հիսուսի ծննդից մի քանի հարյուր տարի հետո միայն հաստատվեց տարիները հաշվելու մեր ներկա մեթոդը: Այսօր տարիները հաշվելու այս համակարգն օգտագործվում է աշխարհի գրեթե բոլոր երկրներում:

2004 թվականը նշանակում է 2004 տարի Քրիստոսի ծննդից հետո: Քրիստոսի ծննդից առաջ եղած տարիները հաշվվում են դեպի հետ: Օրինակ, Հին Կտակարանի վերջին գիրքը՝ Մադաքիան, գրվել է մոտավորապես Ք.Ա. 400թ-ին, կամ Քրիստոսի ծննդից 400 տարի առաջ: Մովսեսը ծննդոցը գրել է Ք.Ա. 1500թ.-ին, կամ 1500 տարի Քրիստոսի ծննդից առաջ:

Գլուխ 2

Ինչպե՞ս է գրվել Աստվածաշունչը

Ա. Ներշնչում. ի՞նչ է դա նշանակում:

Ի՞նչ է նշանակում, երբ մենք ասում ենք. «Աստվածաշունչը *ներշնչված* է Աստծուց»: Ինչպե՞ս մենք կարող ենք պարզաբանել, որպեսզի հասկանանք, թե ինչ է այն նշանակում: Աստվածաշնչում երեք համարներ վերաբերում են հատկապես այս թեմային (Բ Տիմոթեոս 3:16 և Բ Պետրոս 1:20-21):

Բ Տիմոթեոս 3:16. (TBS թարգմանություն)

«Ամբողջ Գիրքն Աստծո շունչն է...»:

Բ Տիմոթեոս 3:16: (արևմտահայերեն թարգմանություն)

«Բոլոր Գիրքը Աստուծոյ շունչն է...»:

Բ Տիմոթեոս 3:16.: (արևելահայերեն թարգմանություն)

«Աստծու շնչով գրված ամեն գիրք...»:

Այս համարները ցույց են տալիս, որ «Աստծուց ներշնչված» նշանակում է.

1. Աստված է մեզ տվել Աստվածաշունչը:
2. Աստվածաշնչի բոլոր գրքերը «Աստծո շունչն» են, և «Նա կյանք է տվել դրանց»: Դրանք պարզապես մեռած բառեր չեն ինչ-որ գրքի մեջ: Երբ դու ընդունում ես Աստծո Խոսքը և կիրառում քո կյանքում, այն գործում է: Աստծո Խոսքը կենդանանում է, և Աստված սկսում է փոխել քո կյանքը:

Բ Պետրոս 1:20-21-ը ասում է երկու այլ բաներ, որոնք կօգնեն մեզ հասկանալ այս խոսքերի իմաստը. «Աստվածաշունչը ներշնչված է Աստծուց»:

Բ Պետրոս 1:20-21. «Նախապես այս իմանալով, որ Գրքում ո՛չ մի մարգարեություն իր հատուկ մեկնությունը չունի: Քանի որ հին ժամանակներում մարգարեությունը մարդու կամքով չտրվեց, այլ Աստծո սուրբ մարդիկ խոսեցին՝ Սուրբ Հոգու կողմից դրդված»:

3. Աստվածաշնչի ոչ մի մաս չի կազմվել մարդու կողմից:

4. Սուրբ Գրքի գրողները խոսեցին (և գրեցին) այն, ինչ Սուրբ Հոգին ասաց նրանց:

Երբ մենք ասում ենք. «Աստվածաշունչը ներշնչված է Աստծուց», նկատի ունենք, որ.

Սուրբ Հոգին ուղղորդել է գրողների մտքերը, որպեսզի նրանք գրեն այն, ինչ Աստված էր ուզում, որ նրանք գրեին:

Կարևոր է հասկանալ, որ ամբողջ Աստվածաշունչն է ներշնչված: Բոլոր գրքերը հավասարապես են ներշնչված Աստծո կողմից: Աստվածաշնչում ոչ մի գիրք «ավելի ներշնչված» չէ Աստծո կողմից, որքան մյուսները:

Բ. Ինչպե՞ս է Աստված ներշնչել մարդկանց՝ գրել Աստվածաշունչը:

1. **Աստված նրանց կոնկրետ բառեր չի ասել, որպեսզի գրի առնեն (մեծամասամբ):**

Նրանք չեն նստել և մի բարձր ձայն լսել, որը կասեր. «Սա է ասում Տերը: Ահա թե ինչ է ասում Եսայի 4-րդ գլուխը...»: Կան մի քանի դեպքեր Աստվածաշնչում, երբ Աստված բառ առ բառ ասել է գրողին, թե ինչ գրի: Տասը պատվիրաններն այդ օրինակներից են:

2. **Աստված նրանց ձեռքերը մեքենաբար չի օգտագործել:**

Աստված այս գրողներին հիպնոսի չէր ենթարկել, իսկ հետո էլ թելադրել Աստվածաշնչի գրքերը: Աստված այս մարդկանց ռոբոտներ չէր դարձրել: Նրանք միանգամայն գիտակցում էին, թե ինչ են անում:

3. **Սուրբ Հոգին նրանց տալիս էր մտքեր, որոնք գրողներն իրենց ուրույն ձևով էին արտահայտում:**

Աստվածաշնչի գրքերն Աստծո խոսքերն են՝ գրված գրողների ուրույն ոճով:

Աստված բազմաթիվ տարբեր մարդկանց ընտրեց՝ գրելու համար Աստվածաշնչի գրքերը: Նրանցից որոշները կրթված էին, մյուսները՝ ոչ: Աստված ընտրեց նրանց բոլորին այնպիսին, ինչպիսին նրանք կային, և օգտագործեց նրանց՝ գրելու համար Աստվածաշնչի մեկ կամ ավելի գրքերը: Աստվածաշնչում դու գրելու տարբեր ոճեր կգտնես: Դրանցից որոշները շատ հասարակ են, որոշները շատ բարդ են, իսկ մյուսները՝ շատ ուսուցողական:

Այդ մարդիկ գրել են այն, ինչ Աստված էր ուզում, որ նրանք գրեին: Նրանք սիրում էին Աստծուն և հետևում էին Նրա ուսմունքին, սակայն նրանք կատարյալ չէին: Բայց և այնպես, մենք կարող ենք համոզված լինել, որ Աստվածաշունչը ճշմարիտ է: Այն վստահելի է, լցված չէ սխալներով ու թերություններով: Ինչո՞ւ: Որովհետև Աստված վերահսկել է ողջ գործընթացը, իսկ Նա թափափված գործ չի անում: Աստվածաշունչն Աստծո պատգամն է՝ ուղղված մարդուն: Միայնգամայն ճիշտ է, որ այն ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ է: Հովհաննես Ավետարանի 17-րդ գլխում Հիսուսն Իր աղոթքի մեջ շատ հստակ է խոսում այս մասին.

Հովհաննես 17:17.

«Սրբացրո՛ւ նրանց Քո ճշմարտությամբ. Քո Խոսքը ճշմարտություն է»:

Գ. Ինչպե՞ս է Աստվածաշունչը փոխանցվել և հասել մեզ:

1. Ինչպե՞ս են գրքերը գրվել սկզբում:

Այն թղթի տեսակը, որ մենք հիմա ենք օգտագործում, գոյություն չունեի հազարավոր տարիներ առաջ, երբ Աստվածաշունչն էր գրվում: Այնպես որ, մարդիկ Աստվածաշնչի գրքերը գրել են կենդանական մշակված կաշվի վրա, որոնք միմյանց կարելով ստացել են երկար կտորներ և փաթաթել: Դրանք կոչվել են գալարներ:

Նրանք այն ժամանակ չունեին տպագրական մեքենաներ կամ համակարգիչներ, այնպես որ բոլոր գրքերը գրվում էին ձեռքով:

Աստվածաշնչի բնօրինակներն այսօր այլևս գոյություն չունեն: Սակայն կան Աստվածաշնչի տարբեր գրքերի հազարավոր պատճեններ: Դրանցից որոշներն արվել են բնօրինակի գրվելուց հետո ընդամենը 100 տարվա ընթացքում:

2. Ինչպե՞ս են արվել Աստվածաշնչի գրքերի պատճենները:

Աստվածաշնչի գրքերի պատճեններն արվել են ձեռագիր եղանակով: Հին Կտակարանի ժամանակներում կային մարդիկ, որոնք իրենց ամբողջ ժամանակը տալիս էին Աստվածաշունչ արտագրելուն: Գրքերի արտագրության գործընթացի կանոնները ծայրահեղ խիստ էին: Ոչ մի թերություն չէր թույլատրվում: Եթե մեկը սխալ էր անում, պետք է մի կողմ գցեր իր պատճենը և նորից սկսեր: Այս խիստ կանոնները, պարզվեց, շատ արժեքավոր էին, քանի որ դրանք օգնեցին պահպանել Աստվածաշնչի ճշգրտությունը երկար տարիների ընթացքում:

Աստվածաշնչի գրքերի այդ ձեռագիր պատճեններից շատերը պահպանվում են մինչև այսօր: Դրանցից որոշներն արվել են Քրիստոսի ծննդից 100-200 տարի առաջ: Աստվածաշնչի այդ պատճենները եղել են և մնում են որպես շատ արժեքավոր: Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը հիմնականում արվել է այս պատճեններից:

Գլուխ 3

Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ Աստվածաշունչն անսխալ (ճշմարիտ) է

Աստվածաշունչը գրվել է երկու կամ երեք հազար տարի առաջ: Ինչպե՞ս կարող եմք իմանալ, որ Աստվածաշունչն անսխալ է: Ինչպե՞ս կարող եմք իմանալ, որ Աստվածաշունչը ճշմարիտ է: Ինչպե՞ս կարող եմք իմանալ, որ Աստվածաշունչը չի փոփոխվել: Գուցե այն լի է թերություններով: Ինչպե՞ս իմանանք՝ արդյո՞ք մարդիկ չեն եղծել Աստվածաշունչը և փոփոխել այն:

Կան մի քանի աղբյուրներ, որոնցից մենք կարող ենք տեղեկանալ՝ համոզվելու համար, որ այսօրվա մեր ունեցած Աստվածաշունչն անսխալ է, հավաստի և ճշմարիտ: Կարող ենք վստահ լինել, որ այն լցված չէ սխալներով:

Ա. Բոլոր մարգարեությունները եղել են ճշմարիտ և անսխալ:

«Մարգարեություն» բառն ունի երկու հիմնական սահմանում:

- (1) Աստծո պատգամը՝ ասված քրիստոնյայի միջոցով:
- (2) Կանխասածություն. Պատգամ՝ տրված Աստծուց, թե ինչ է տեղի ունենալու ապագայում:

Աստվածաշունչը լի է մարգարեություններով: Սկսած Ծննդոց երրորդ գլխից մինչև Հայտնության վերջին գլուխը՝ Աստված մեզ բազմաթիվ պատգամներ և կանխասածություններ է տվել: Մարգարեություններից ոչ մեկը սխալ չի դուրս եկել: Աստվածաշնչի շատ մարգարեություններ ասում էին Հիսուսի առաջին գալստյան մասին: Այս մարգարեություններից յուրաքանչյուրը կատարվեց այնպես, ինչպես Աստված էր ասել, որ լինելու էր: Եսայի 53-ը և սաղմոս 22-ը Հիսուսի մասին գրված մարգարեություններ են: Տե՛ս նաև Մատթեոս 5:17-18, Երեմիա 28:9 և Ղուկաս 21:24:

Կան շատ մարգարեություններ, որոնք դեռ չեն կատարվել: Դրանցից շատերը վերաբերում են Հիսուսի երկրորդ գալստյանը: Հետ նայելով, թե ինչպես են անցյալ մարգարեությունները կատարվել, մենք կարող ենք լիովին վստահ լինել, որ

Աստված կիրականացնի մյուս բոլոր մարգարեությունները, որոնք վերաբերում են Հիսուսի երկրորդ գալստյանը:

Բ. Աստվածաշունչն ասում է, որ այն Աստծո Խոսքն է:

Մարդիկ, որոնք գրել են Աստվածաշունչը, հստակ խոսել են և ասել, որ այն Աստծո Խոսքն է: Աստված առաջնորդել է նրանց և ասել, թե ինչ գրեն: Գրողներն Աստծուն են վերագրել այն, ինչ իրենք գրել են:

Բ Տիմոթեոս 3:16

Բ Պետրոս 1:20-21

Գ. Հիսուսն ասաց, որ Աստվածաշունչն Աստծո Խոսքն է:

Հիսուսն իր կյանքի ընթացքում մի քանի անգամ հստակորեն ասել է, որ Աստվածաշունչը ճշմարիտ է: Հիսուսը Աստվածաշնչի հանդեպ Իր ամուր հավատը ցույց էր տալիս՝ ամեն օր հղումներ անելով Աստվածաշնչին Իր կյանքի բոլոր ասպարեզներում:

Հովհաննես 17:17

Հովհաննես 10:35

Մատթեոս 5:17-18

Եթե Աստվածաշունչն Աստծո Խոսքը չէ և եթե Աստվածաշունչը ճշմարիտ չէ, ուրեմն Հիսուսը Հովհաննես 17:17-ում սուտ է խոսել: Եթե Հիսուսը սուտ է խոսել, ուրեմն Նա մեղք է գործել: Եթե Հիսուսը մեղք է գործել, Նրա մահը խաչի վրա ոչ մի ձևով չի կարող վճարել մեր մեղքերի տուգանքը: Բայց և այնպես, կարդա՛ այս հատվածները և տե՛ս, թե ինչ են դրանք ասում Հիսուսի կյանքի մասին:

Եբրայեցիներին 4:15

Եբրայեցիներին 5:8-9

Ա Պետրոս 3:18

Դ. Աստվածաշնչում հակասություններ չկան:

Ի՞նչ է հակասությունը:

Դա այն է, երբ երկու տարբեր նախադասություններ պնդում են, որ ճշմարիտ են, մինչդեռ միանգամայն հակառակ են իրար: Սա նշանակում է, որ եթե այդ նախադասություններից մեկը ճիշտ է, ապա մյուսը պետք է սխալ լինի: Օրինակ, այս երկու նախադասությունները հակասում են իրար. «Շունը սատկած է» և «Շունը ողջ է»: Եթե մեկը ճիշտ է, ապա մյուսը պետք է սխալ լինի: Դրանք չեն կարող երկուսն էլ միաժամանակ ճիշտ լինել:

Աստվածաշունչն ինքն իրեն չի հակասում: Այն մի դեպքում չի ասում, որ ինչ-որ բան ճիշտ է, իսկ հետո մեկ այլ տեղ ասում, որ դրա հակառակն է ճիշտ: Աստվածաշունչը մի տեղ չի ասում, որ «Աստված մահացած է», իսկ մեկ ուրիշ տեղ՝ որ «Աստված ողջ է»: Երբեմն թվում է, թե Աստվածաշնչում կան հակասություններ: Շատ անգամ խնդիրն այն է, որ մարդիկ մեջբերում են անում համարի մի մասը միայն և չեն հասկանում համարի կամ գլխի ամբողջ պատգամը:

Զարմանալի մեկություն կա Աստվածաշնչում: Ողջ Աստվածաշունչը փոխանցում է մեկ ամբողջական պատգամ: Սա հնարավոր է միայն այն դեպքում, եթե Աստվածաշունչը միայն մեկ հեղինակ ունենա: Աստված է այդ միակ Հեղինակը: Նա է ուղղորդել՝ գրել Աստվածաշնչի բոլոր 66 գրքերը: Ահա թե ինչու՝ Աստվածաշնչում հակասություններ չկան:

Ե. Հնէաբանությունն ապացուցում է, որ Աստվածաշունչն անսխալ է:

Հնէաբանական ուսումնասիրություններն ապացուցում են Աստվածաշնչի անսխալականությունը: Ի՞նչ է հնէաբանությունը: Բառարաններից մեկն այն այսպես է սահմանում. «Գիտություն, որն ուսումնասիրում է անցյալի կյանքն ու պատմությունը՝ թաղված քաղաքներ, տաճարներ, գործիքներ և այլն պեղելու կամ հայտնաբերելու միջոցով»: (*The Courtis-Walter Illustrated Golden Dictionary for Young Readers*, Golden Press)

1. Հնէաբանները երկար տարիներ են անցկացրել՝ պեղելով և ուսումնասիրելով հին քաղաքներ, որոնք գոյություն են ունեցել, երբ գրվում էր Աստվածաշունչը:

Հարյուրավոր գրքեր են գրվել հնէաբանական հայտնագործությունների մասին: Աստվածաշնչի ոչ մի հատիկ փաստ սխալ դուրս չի եկել: Ոչ մի հնէաբան չի ապացուցել, որ Աստվածաշունչը սխալ է քաղաքների, թագավորների և սովորությունների մասին գրված փաստերի մեջ:

2. Մեռյալ ծովի գալարներն ապացուցում են, որ Աստվածաշունչը ճշմարիտ է:

Մեռյալ ծովի գալարների հայտնաբերումը 20-րդ դարի հնէաբանական մեծագույն հայտնագործություններից մեկն է: Մեռյալ ծովի գալարները հայտնաբերվել են 1947 թվականին այն վայրում, որտեղ հիմա Իսրայել պետությունն է: Այդ գալարները ներառում են պատճեններ (կամ մասեր) Հին Կտակարանի բոլոր գրքերից, բացի մեկից: Այդ գալարներից շատերը գրվել են Հիսուսի ծննդից 100-200 տարի առաջ: Հին Կտակարանի գրքերի այդ պատճենները

1000 տարով ավելի հին են, քան Հին Կտակարանի որևէ այլ պատճեն, որի գոյության մասին նախկինում արդեն գիտեին:

Երբ Մեռյալ ծովի գալարները համեմատեցին այսօրվա մեր ունեցած Աստվածաշնչի հետ, ոչ մի նշանակալից տարբերություն չգտնվեց: Մեռյալ ծովի գալարները հզոր փաստարկ են՝ ապացուցելու, որ այսօրվա մեր ունեցած Աստվածաշունչն անսխալ է և հավաստի: Այդ գալարները մեզ տալիս են համոզիչ փաստարկներ այն մասին, որ այսօրվա Աստվածաշունչն ասում է այն, ինչ ասել էր այն ժամանակ, երբ նոր էր գրվել:

Չ. Աստվածաշնչի բժշկական խորհուրդներն ապացուցում են, որ այն անսխալ է:

Աստվածաշնչում եղած բժշկական ցուցումների վերաբերմամբ ապացուցվել է (որոշների մասին ընդամենը վերջերս), որ ամբողջությամբ անսխալ են ըստ այսօրվա բժշկական գիտելիքների:

Բժիշկ Ս. Ի. Մաք Միլլենը գրել է «Այս հիվանդություններից ոչ մեկը» (*None of These Diseases* (Spire Books)) գիրքը: Նա քննարկում է Աստվածաշնչում տեղ գտած բժշկական օրենքները և ցույց տալիս, թե որքան անսխալ են դրանք՝ համեմատած ժամանակակից բժշկության հետ:

Է. Ապացուցի՛ր Աստվածաշնչի ճշմարտացիությունն ինքդ քեզ համար՝ ստուգելով դրա ուսուցումները քո սեփական կյանքում:

Եթե Աստվածաշնչյան ուսուցումները ճիշտ են, ուրեմն, երբ դու սկսես դրանք կիրառել, քո կյանքում փոփոխություններ տեղի կունենան: Եթե Աստվածաշնչի ուսուցումները սխալ են, ապա ոչ մի բան էլ տեղի չի ունենա քո կյանքում, երբ դու սկսես դրանք գործադրել:

Իրականում միլիոնավոր մարդիկ արել են դա: Նրանք անձամբ են ստուգել Աստվածաշնչի ուսուցումները և իրենց համար ապացուցել, որ դրանք ճշմարիտ են, դրանք գործում են: Անգամ Աստվածաշնչում մենք գտնում ենք շատ մարդկանց օրինակներ, որոնք իրենց կյանքում ապացուցել են, որ Աստծո ուսուցումները ճշմարիտ են:

Մարկոս 16:20.

«Իսկ նրանք գնացին և ամենուրեք քարոզեցին, և Տերը գործակցում էր նրանց հետ ու Խոսքը հաստատում ուղեկցող նշաններով»:

Դա կարող է շատ ոգևորիչ տարբերակ լինել՝ ապացուցելու Աստվածաշնչի անսխալականությունը, երբ դու քո կյանքում ես փորձում ապացուցել, որ Աստվածաշնչի ուսուցումները ճշմարիտ են:

Մադաքիա 3:10

Կողոսացիներին 1:5-6

Հովհաննես 7:16-17

Գլուխ 4

Թռուցիկ հայացք Հին Կտակարանին

Աստվածաշունչն ունի երկու բաժիններ, որոնք կոչվում են կտակարաններ: Կտակարանը փաստաթուղթ է կամ պայմանագիր կտակի մասին: Աստվածաշունչը Աստծո Ուխտն է մեզ հետ:

Հին Կտակարանը տրվել է հրեաներին: Այն սկսվում է աշխարհի ստեղծումից և ավարտվում Հիսուսի ծննդից մոտ 400 տարի առաջ: Այն պատմում է նախքան Հիսուսի գալը Աստծո՝ մարդկանց հետ փոխհարաբերությունների մասին: Աստվածաշնչի երեք քառորդը կազմում է Հին Կտակարանը: Այն սկզբում գրվել է եբրայերեն: Հին Կտակարանի որոշ հատվածներ գրվել են արամերեն:

Նոր Կտակարանում Աստված մեզ ասում է, թե ինչու մենք ունենք Հին Կտակարանը:

Ա Կորնթացիների 10:11.

«Եվ այս ամենը նրանց (Հին Կտակարանի մարդկանց) պատահեց որպես օրինակ, և որպես խրատ գրի են առնված մեզ համար, որոնց վրա աշխարհի վերջը հասավ»:

Ուրիշ երկու հատվածներ մեզ հայտնում են հստակ պատգամ այն մասին, որ Աստված մեծ արժեք է տալիս Հին Կտակարանի ասածներին:

Բ Տիմոթեոս 3:16-17.

«Ամբողջ Գիրքն Աստծո շունչն է և օգտակար՝ վարդապետության, հանդիմանելու, ուղղելու և արդարությամբ խրատելու համար. (17) որպեսզի Աստծո մարդը կատարյալ լինի, ամեն բարի գործի պատրաստված»:

Եբրայեցիներին 4:12.

«Որովհետև Աստծո Խոսքը կենդանի է ու զորավոր, և ամեն մի երկսայրի սրից ավելի կտրուկ, որ թափանցում է մինչև անձի ու հոգու, հողերի և ողնածուծի բաժանման սահմանը, և մտքերի ու սրտի խորհուրդների գննողն է»:

Այստեղ գրված են Հին Կտակարանի գրքերի բաժանումները:

Հին Կտակարանի հինգ բաժանումները

Մովսեսի գրքերը

Ծննդոց

Ելից

Ղևտացիների

Թվոց

Երկրորդ օրինաց

Քնարական գրքեր

Հոբ

Սաղմոսներ

Առակաց

Ժողովող

Երգ Երգոց

Փոքր մարգարեներ

Օվսեե

Հովել

Ամովս

Աբդիա

Հովնան

Միքիա

Նավում

Պատմական գրքեր

Հեսու

Դատավորների

Հռութ

Ա Թագավորաց

Բ Թագավորաց

Գ Թագավորաց

Դ Թագավորաց

Ա Մնացորդաց

Բ Մնացորդաց

Եզրաս

Նեեմիա

Եսթեր

Մեծ մարգարեներ

Եսայի

Երեմիա

Ողբ Երեմիա

Եզեկիել

Դանիել

Ամբակում

Սոփոնիա

Անգե

Զաքարիա

Մադաքիա

Գլուխ 5

Թռուցիկ հայացք Նոր Կտակարանին

Նոր Կտակարանի քսանյոթ գրքեր պատմում են Հիսուս Քրիստոսի կյանքի մասին և այն, թե ինչ տեղի ունեցավ Նրա՝ երկինք գնալուց հետո: Այս գրքերից շատերը պատմում են Հիսուսի աշակերտների և Պողոսի ծառայության մասին:

Ահա Նոր Կտակարանի գրքերի անվանումներն ու բաժանումները:

Նոր Կտակարանի հինգ բաժանումները

Ավետարաններ	Պողոսի նամակները	Ընդհանրական նամակներ
Մատթեոս	Հռոմեացիներին	Եբրայեցիներին
Մարկոս	Ա Կորնթացիներին	Հակոբոս
Ղուկաս	Բ Կորնթացիներին	Ա Պետրոս
Հովհաննես	Գաղատացիներին	Բ Պետրոս
	Եփեսացիներին	Ա Հովհաննես
	Փիլիպպեցիներին	Բ Հովհաննես
	Կողոսացիներին	Գ Հովհաննես
	Ա Թեսալոնիկեցիներին	Հուդա
Եկեղեցու պատմություն	Բ Թեսալոնիկեցիներին	
	Ա Տիմոթեոս	
	Բ Տիմոթեոս	
	Տիտոս	
Գործք Առաքելոց	Փիլիմոն	Մարգարեական գիրք
		Հայտնություն